ցին. և թէ անդ գնայր՝ անդ գլպենայր[1]), գի թէ ինքն անկանէր ի ձեռս նորա՝ մեծ ամօթ դնէր գայս։ Եւ գլեզուագարիլն յայլազանց արժանիս ոչ համարէին՝ թէ ազգ մի ի վերայ իրերաց յարուցեալ կան յերկուս բաժանեալք. և կային ի մէջ տարակուսանաց ըստ այսմ իրից մտածութեանց, այլ լռելեան կամէին հատուցումն առնել իւրեանց տեղեաց։ Այլ Հասանիքն օրըստօրէ առաւելանային, բազմանային, փարթամանային, առատանային զօրօք և գանձիւք ամենայն փաշայիւքն արևելեան՝ բաց յիշխանէն Արզրումայ, և նա ի գործի իւրում կայր և էր յանհի։ Երևելին ընդդիմակ Մուրթազան էր, և նա ևս պարտեաւ։ Եւ իբր զթագաւորս նստէր անահ և անհոգ, նաև զքաղաքսն տիրապետէին և նստեալ էին ամենայն բանակօք մերձ քաղաքին Բերիոյ՝ ի դաշտն, որ ասի (դարբաղ)։ Թաթար Ահմատ աղա ումն ի նոցանէ, որ էառ զԲեօթահեայ բաժին փաշայութիւն, գայ ի վերայ Մուրթազին. յայնժամ Ահմատն որ ունէր ԸՌ արս, (ճառը անըշրեանլէ) զՄուրթազան որ ԺԵ ոգով փախաւ ի Հալապ։ Եւ պոլուկքն ի տեղս տեղս իջեալ՝ ի չէնս և ի գիւղս բազում ոճրագործութիւնս առնէին, թէպէտև չէր յայտնի յերկիւղէ մեծամեծացն։

Գալուստ վէզիրին ասացաք Հոկտեմբեր ԺԴ էր, որ բանակ արար ամենայն զօրօք ընդ թագաւորին։ Եւ Ռուհիճանն իբր թէ չիք ի մեղս լեալ, առեալ արս ի մեծամեծաց յարանցն յայնցանէ, երթեալ առ վէզիրն և տայ ընծայ նմա. իսկ նայ լուեալ էր զեղեալն։ Նաև համախմբեալք ի միասին Սուրբ Սարգսի աթոռակալք եւ երեսփոխանք՝ իշխանք կոչեցեալք ըստ իւրեանց, հրճուեալք, բերկրեալք եւ ուրախացեալք

1) անդիպենայր.